This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

GRAD
EREN
413
BUHR

A 989,431

Digitized by Google

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

66

ՕՐԷՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Հաստատեալ

ՅԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի ՆԻՍՏ Զ· ԲԱՑՄԱՆՆ 1880 ԱՄԻ

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

Կ· ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՈՆԵԱՆ

1880

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Digitized by Google

Digitized by Google

Orenk Azgayin Varchakan...
Ա13

ՕՐԷՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Հաստատեալ

ՅԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի ՆԻՍՏ Զ. ԲԱՑՄԱՆ 1880 ԱՄԻ

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]
Կարգաթիւ 3166

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՈՆԵԱՆ

1880

Digitized by Google

Grad
EREN
413
BUHR

Digitized by Google

ՕՐԷՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

ՅԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ի նիստ Զ. բացմանն 1880 ամի

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

ԳԼՈՒԽ Ա.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. Թուրքիոյ Հայոց կեդրոնական վարչութեան իշխանութիւնն յանձնուած է Կ. Պօլսոյ Պատրիարքին, որ կը վարէ զայն վարչական խորհրդոց միջոցաւ: (Տե՛ս յօդուած 8)

—

Digitized by Google

Գ.

ՊԱՏՐԻԱՐՔ

Յօդ. 2. Պատրիարքն Ազգային Վարչութեան Նախագահն է, նորա գործադիր իշխանութիւնը կը վարէ և Տէրութեան ու Ազգին միջև կեցած յարաբերութեանց պաշտօնական միջնորդն է։

Իւր պարտաւորութիւնն է հսկել՝ Ազգային Սահմանադրութեան և օրինաց անթերի գործադրութեան։

Յօդ. 3. Պատրիարքն առ 'ինքն եկած պաշտօնական գրերն՝ յետ արձանագրութեան 'ի դիւանատան՝ կը յանձնէ Վարչական Խորհրդոյ, կամ այն Խորհրդականին՝ որոյ ձեռնհասութեան կը պատկանի. (Տե՛ս Յօդ. 19, 21, 22, 23, 24 և 25)։ և նոյա որոշումներն՝ ստորագրեալ ընդունելով՝ անմիջապէս կը գործադրէ պաշտօնական գրութեամբ, զոր իրեն հետ կ'ստորագրէ որոշող մարմինն։

Բայց երբ Պատրիարքն համամիտ չը լինի տրուած որոշման, կը վերադարձնէ զխնդիրն 'ի կրկին նկատառութիւն՝ հանդերձ իւր դիտողութեամբ։

Digitized by Google

Եւ եթէ համաձայնութիւն չգոյա-
նայ, Պատրիարքը կը ներկայէ զխնդիրը Վարչական Խորհրդոյ՝ երբ անհամաձայնութիւնը Խորհրդականաց հետ է, և Ազգային Ժողովոյ վճռոյն՝ երբ Վարչական Խորհրդոյ հետ է։

Յօդ. 4. Պատրիարքն ինքնին կը անօրինէ և կը գործադրէ այն ամեն խնդիրները, որ օրինօք նախատեսեալ են, կամ սովորական լինելով անյապաղ անօրէնութեան կը կարօտին։

Սոյն երկուց պարագայից մէջ՝ ի գործ դրուած անօրէնութեանց պատասխանատուն Պատրիարքն է միայն, մինչև որ ձեռնհաս մարմնոյն հաղորդելով ընդունել և արձանագրել տայ զնոսա։

Յօդ. 5. Պատրիարքը կը հսկէ որ Վարչական Խորհրդականք և եկեղեցական ու աշխարհական ազգային ամեն կարգի պաշտօնեայք իրենց պարտքն անթերի կատարեն. և երբ Ազգային Սահմանադրութեան և օրինաց առջև անբաւական կամ անհաստատ գտնուին. Պատրիարքը նոցա պաշտօնանկութիւնը

կ՚առաջարկէ նոցա վերադաս իշխանութեան, պատճառաբանեալ տեղեկագրով։

Յօդ. 6. Պատրիարքը փոխանորդ մ՚ունի, զոր ինք կ՚ընտրէ և Վարչական Խորհրդոյ հաւանութիւնն ստանալէ յետոյ կ՚անուանէ։

Յօդ. 7. Պատրիարքական փոխանորդին պաշտօնն է՝ նշանտուութիւններն և պսակադրութիւններն հրամայել և ճանապարհորդաց անցագրերը վաւերել ի դիմաց Պատրիարքին. թէ՛ Պօլսեբնակ և թէ՛ գաւառաբնակ ազգայնոց վիճակագրութեանն հոգ տանիլ. Պատրիարքարանի ներքին բարեկարգութեան հսկել. Պատրիարքարան դիմող աղքատ ազգայնոց վիճակն ստուգել և արժանաւորները Թաղային Խնամակալութեանց յանձնարարել. բանտարկեալ ազգայնոց վիճակին վերահաս լինիլ, և Դատական Խորհըրդականին կարծիքն առնլով՝ կարելի օգնութիւնն ընել նոցա. Վարչական մարմնոց կողմէ յանձնարարեալ խնդիրները տնօրինել, և առ ինքն հասած վէճերն իրաւախոհութեամբ կարգադրել։

Digitized by Google

ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 8. Վարչական Խորհուրդը կը բաղկանայ Տէրութեան և Ազգային օրինաց հմուտ վեց խորհրդականներէ, որոց իւրաքանչիւրն՝ ըստ իւրեանց յանձնառութեան՝ վարչական գործոց մէն մի ճիւղերուն կը յատկանան, և նոցա անօրինութիւն ու հսկողութիւնը կ՚ստանձնեն, հետևեալ բաժանմամբ.

1. Կրօնական գործոց
2. Ցարաբերական »
3. Ներքին »
4. Դատական »
5. Կրթական »
6. Տնտեսական »

Յօդ. 9. Վարչական Խորհրդոյ վեց անդամք Ազգային Ժողովոյ մեծամասնութեան վստահութիւնը վայելող ձեռնհաս անձինք պէտք է լինին, զորս Պատրիարքն ընտրելով կը ներկայէ առ Ազգային Ժողովն, միանգամայն և առ Բ. Դուռն ։

Յօդ. 10. Վարչական Խորհրդէն որ

և է պատճառաւ պակսող Խորհրդականին տեղ՝ Պատրիարքն անյապաղ նոր մը կ'ընտրէ, մնացեալ անդամոց կարծիքն առնալէ յետոյ։

Յօդ. 11. Վարչական Խորհրդոյ պաշտօնն երկու տարի կը տեւէ, և անդամք վերընտրելի են։

Յօդ. 12. Ուրաքանչիւր Խորհրդական առնուազն շաբաթը մի անգամ կերթայ ի Պատրիարքարան, և իւր ճիւղին վերաբերեալ խնդիրները Վարչութեան ներքին կանոնագրին համաձայն կը տնօրինէ, ի հարկին Պատրիարքին հետ խորհրդակցելով։ Իսկ իւր ձեռնհասութենէն վեր դատած խնդրոց տնօրէնութիւնն ու պատասխանատուութիւնը Վարչական Խորհրդոյ կը թողու։

Այն խնդիրներն, որք մէկէն աւելի ճիւղերու կը վերաբերին, ձեռնհաս Խորհրդականաց միաբան գործակցութեամբ կը տնօրինուին։

Յօդ. 13. Վարչական Խորհուրդն առնուազն ամիսն երկու անգամ ի նիստ կը

Digitized by Google

գումարի, և որոշեալ ժամուն ներկայից մեծագոյն մասամբ կը տնօրինէ կանխաւ հաղորդուած օրակարգին մէջ նշանակեալ խնդիրները. միանգամայն և կը տեղեկանայ խորհրդականաց առանձինն կատարած տնօրէնութեանց:

Յօդ. 14. Վարչական խորհրդականք պատասխանատու են առ Ազգային ժողովն, մէն մի խորհրդական՝ իւրեանց յատուկ ճիւղին համար անհատաբար, իսկ հանրական խնդրոց համար՝ ամենքն հաւասարաբար:

Յօդ. 15. Վարչական խորհուրդն՝ իւր անմիջական իրաւասութեան ենթարկեալ ազգային հաստատութեանց համար՝ մասնաւոր Հոգաբարձութիւններ կը կարգէ, ձեռնհաս խորհրդականին կարծիքն առնելէ յետոյ:

Նմանապէս անձնիւր խորհրդական իրաւունք ունի՝ իւր ձեռնհասութեան պատկանեալ խնդրոց համար՝ ի հարկին առժամանակեայ Մասնախմբեր կարգելու:

Այն Հոգաբարձութիւնք և Մասնա-

Digitized by Google

խումբք Պատրիարքին կողմէ կը կոչուին 'ի պաշտօն, և զիրենք ընտրող մարմնոյն պատասխանատու մնալով կը գործեն ։

Յօդ. 16. Իւրաքանչիւր խորհրդական իւր պաշտօնին յատուկ դիւանադպիրներն ինք կ'ընտրէ, և իւր ճիւղին ծախուց համար Ելմտացոյցին մէջ նշանակեալ գումարին համեմատութեամբ նոցա թոշակը կը սահմանէ, և Վարչական խորհրդոյ հաւանութեանն ենթարկելէ յետոյ՝ Պատրիարքին կը ներկայէ, որ կ'անուանէ զնոսա ։

Յօդ. 17. Վարչական խորհրդականք չեն կրնար ստորադաս համարատու ճիւղերու մէջ միանգամայն պաշտօն վարել. նմանապէս և չեն կրնար Ազգային Ժողովոյ Մայր և Նախաքննիչ Դիւանաց և Կրօնային ու Քաղաքային Ատենից անդամ լինել ։

Յօդ. 18. Վարչական խորհրդականք և ազգային Կեդրոնական Վարչութեան մասնակցող ամեն կարգի անթոշակ պաշտօնատարք՝ իւրեանց երթևեկի ծախուց

փոխարինութեան համար՝ որոշեալ գու-
մար մը կ'առանան կեդրոնական սնտուկէն։
Սոյն փոխարինութեան սահմանն ու
քանակութիւնը մասնաւոր կանոնագրով
պիտի սահմանուին Ազգային Ժողովէն,
ըստ առաջարկութեան Վարչական Խոր-
հրդոյ։

Կրօնական Խորհրդական

Յօդ. 19. Կրօնական Խորհրդականին
պաշտօնն է՝ Ազգին կրօնական գործոց
տեսչութիւնն։ Իւր պարտաւորութիւնքն
են՝ եկեղեցական պաշտամանց, ընթերց-
ուածոց և երգեցմանց կանոնաւորութեան՝
ինչպէս նաև ազգային վարժարանաց և
ընծայարանաց մէջ Քրիստոնէական կրօնի
ուսուցման հսկել. կրօնագիտութեան և
երգեցմանց դասագրքերն ու դասա-
տուներն որոշել և արտօնել, նոյնպէս և
եկեղեցական գրեանց տպագրութիւնն
արտօնել. ուսեալ և արժանաւոր եկե-
ղեցականներ հասցնելու, եկեղեցակա-
նաց վիճակը բարւոքելու և նոցա ա-
պագայն ապահովելու հոգ տանիլ։

Կրօնական Խորհրդականը Պոլիս
գտնուող կամ վիճակաւոր Եպիսկոպո-

ներէ մին կը լինի ։ Եթէ վիճակաւորներէ լինի ընտրեալն, իւր վիճակը փոխանորդով մի կը կառավարէ, ցլրումն իւր պաշտօնավարութեան ։

Յօդ. 20. Կրօնական Խորհրդականը կ'առաջարկէ Կ. Պօլսոյ Եկեղեցեաց Քարոզիչներն ու Աւագ Քահանայներն, և Պատրիարքը կ'անուանէ ։

Յարաբերական Խորհրդական

Յօդ. 21. Յարաբերական Խորհրդականին պաշտօնն է՝ Տէրութեան և ուրիշ ազգաց հետ յարաբերութեանց ընդհանուր տեսչութիւնն. յարաբերութիւնք՝ որք կը ծագին Ազգին առանձնաշնորհութիւններէն և աւանդական սովորութիւններէն։ Իւր պարտաւորութիւնքն են՝ Ազգին իրաւունքն ու արտօնութիւններն անվթար պահելու և արդիւնաւորելու աշխատիլ. և քննել ու որոշել այն ամէն խնդիրներն՝ որք Տէրութեան և ուրիշ ազգաց հետ բանակցութեան կը կարօտին ։

Ներքին գործոց Խորհրդական

Յօդ. 22. Ներքին գործոց Խորհր-

դականին պաշտօնն է՝ առաջնորդական վիճակաց և Կ. Պօլսոյ Թաղերուն հետ յարաբերութեանց ընդհանուր տեսչութիւնն։ Իւր պարտաւորութիւնքն են՝ Ազգային Սահմանադրութեան և օրինաց ամենուրեք գործադրութեան հոգ տանիլ. ներքին բարեկարգութեան հսկել. ազգայնոց նիւթական զարգացման միջոցներուն զբաղիլ. և քննել ու որոշել առաջնորդական վիճակներուն և Կ. Պօլսոյ Թաղերուն վերաբերեալ օրինական և վարչական խնդիրներն։

Դատական Խորհրդական

Յօդ. 23. Դատական Խորհրդականին պաշտօնն է՝ ազգային դատական գործոց ընդհանուր տեսչութիւնն։ Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգայնոց բողոքներուն և դատերուն օրինաւոր քննութեան և վճռոց ճշդիւ գործադրութեանն հսկել. Բ. Դռնէն և Պատրիարքէն յանձնարարեալ դատերը ձեռնհաս դատարանաց յղել, և ազգային դատական օրինաց ճշդիւ կիրառութիւնը պաշտպանել։

Digitized by Google

Կրթական Խորհրդական

Յօդ. 24. Կրթական խորհրդականին պաշտօնն է՝ ազգային կրթութեան ընդհանուր տեսչութիւնն ։ Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային կրթութիւնն ընդհանրացնելու և զարգացնելու միջոցները քաջալերել. ազգային վարժարանաց, ընծայարանաց և մատենադարանաց վրայ հսկել. մանկավարժներն ու դասատուներն արտօնել. նոցա կացութիւնը բարւոքելու, ապագայն ապահովելու և հետզհետէ լաւագոյններն հասցնելու հոգ տանիլ. ազգային վարժարանաց դասագրքերն որոշել. և ազգային կրթութեան աշխատող անհատից և մարմնոց ուղղութեանն հսկել։

Տնտեսական Խորհրդական

Յօդ. 25. Տնտեսական խորհրդականին պաշտօնն է՝ եկեղեցեաց, վարժարանաց, վանօրէից և այլ ամենայն ազգային հաստատութեանց տնտեսական ընդհանուր տեսչութիւնը ։ Իւր պարտաւորութիւնքն են՝ ազգային սեփականութեանց անկորուստ պահպանութեան,

Digitized by Google

նոյա պատկանեալ գոյից , կալուածոց և հասութից կանոնաւոր արձանագրութեան և պարբերական համարատուութեան , վագըրֆաց ու կտակաց անվրէպ գործադրութեան , նոյնպէս և յանուն ազգին եղած հանգանակութեանց ճշդիւ իւրեանց նպատակին գործածութեան հսկել ։ Կ. Պոլսոյ մէջ շինութեանց , նորոգութեանց և գնմանց խնդիրները տնօրինել . իսկ ապառիկ գնմանց կամ վաճառմանց և փոխառութեանց վերաբերեալ խնդիրները՝ Վարչական Խորհրդին . կարծիքն ստանալով արտօնել . Կեդրոնական սնտուկին ելումուտքը տնտեսել , ըստ որոշեալ ելմտացոյցին . և ուղղակի ու անուղղակի տրոց կանոնաւորապէս բաշխման և հաւաքման հոգ տանիլ ։

ԳԼՈՒԽ Բ.

ԴԱՏԱՐԱՆՔ

Յօդ. 26. Ազգային դատական իշխանութիւնն երեք աստիճանի իրաւասութեամբ ՚ի գործ կը դրուի , Թաղային, կեդրոնական և բարձրագոյն դատարաններու միջոցաւ ։

Digitized by Google

Յօդ. 27. Որ և է խնդիր, ՚ի բաց առեալ ազգային պաշտօնակալաց և եկեղեցականաց պաշտպանման վերաբերեալները, (Տե՛ս Յօդ. 35 և 41) նախ՝ առաջարկեալ կողման Թաղային Դատարանին կը ներկայանայ. և երբ հաշտարարութեամբ չվերջանայ, Կեդրոնական Դատարանին կուգայ. իսկ երբ հակառակորդք սորա վճռոյն չհաւանին, Բարձրագոյն Դատարանին կը դիմեն՝ վերաքննութեան համար ։

Յօդ. 28. Ամեն կարգի դատաւորք երկու տարուան համար կ՚ընտրուին, և վերընտրելի են ։

Թաղային Դատարանք

Յօդ. 29. Թաղային Դատարաններուն պաշտօնն է՝ առ ինքեանս յանձնարարեալ խնդիրներն ու վէճերը հաշտարարութեամբ լուծելու աշխատիլ. և երբ չյաջողին՝ տեղեկագրել առ Դատական Խորհրդականն, որ կը յղէ զխնդիրն առ պատկանեալ Սենեակ Կեդրոնական Դատարանին ։

Յօդ. 30. Թաղային Դատարանները

Digitized by Google

կը կազմուին՝ Թաղական Խորհրդէն դուրս և՛ անկէց ընտրեալ՝ բանիբուն, ամուսնացեալ և Թաղեցւոց վստահութիւնը լիովին վայելող երկու անձերէ, և Թաղին եկեղեցական դասէն ընտրեալ մի քահանայէ ։

Բ.

Կեդրոնական Դատարան

Յօդ. 31. Կեդրոնական Դատարանն երեք Սենեակներու կը բաժնուի, Ամուսնական, Անհատական և Վարչական. և իւր պաշտօնն է՝ սոցա միջոցաւ քննել և վճռել ազգային շրջանակին մէջ տեղի ունեցած ամեն դատերն ։

Յօդ. 32. Կեդրոնական Դատարանի անդամք Վարչական Խորհրդէն կ՚ընտրուին, ըստ առաջարկութեան Դատական Խորհրդականին ։

Ամուսնական Սենեակ

Յօդ. 33. Ամուսնական Սենեակը կը կազմուի, 40 տարին լրացուցած, ամուսնացեալ և Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց հմուտ հինգ ձեռնհաս անձերէ,

Digitized by Google

որոնց մէկը եկեղեցական պէտք է լինի ։

Այս Սենեակին կը պատկանին բոլոր ամուսնական դատերն ։

Անհատական սենեակ

Յօդ. 34. Անհատական սենեակը կը կազմուի, 30 տարին լրացուցած և Տէրութեան օրինաց հմուտ հինգ ձեռնհաս անձերէ ։

Այս Սենեկին կը պատկանին՝ ժառանգական, կտակային, ընտանեկան, պատուոյ և վնասու հատուցման, և այլ ամենայն անհատական դատերն ։

Վարչական Սենեակ

Յօդ. 35. Վարչական Սենեակը կը կազմուի, 30 տարին լրացուցած և վարչական օրինաց հմուտ հինգ ձեռնհաս անձերէ ։

Այս Սենեկին կը պատկանին՝ բաց 'ի վարչական Խորհրդոյ և դատական Բարձրագոյն Ատենի անդամներէն՝ բոլոր առաջնորդական, վանական, թաղային և այլ ամենայն ազգային պաշտօնատարաց, մանկավարժից և դասատուաց

պաշտօնին ու պատասխանատուութեան՝ ինչպէս նաև ընտրական իրաւանց և ազգային հրատարակութեանց վերաբերեալ գաները։

Գ.

Բարձրագոյն Դատարան

Յօդ. 36. Բարձրագոյն դատարանը կը կազմուի կրօնական և Քաղաքական երկու Ատեաններէն, որոց առաջինը կը բաղկանայ հինգ օրէնսգէտ եկեղեցականներէ, և միւսը՝ հինգ օրէնսգէտ աշխարհականներէ։ Այս երկու Ատեանները միանալով կը կազմեն խառն Ատեանը։

Յօդ. 37. Կրօնական և Քաղաքական Ատեաններն Ազգային ժողովէն կ'ընտրուին, Ատենապետաց Դիւանին ներկայած սրբագրելի ցանկերուն վրայ։

Կրօնական Ատենին համար Ատենապետաց Դիւանին կողմէ ներկայելի ցանկը՝ քաղեալ պէտք լինի եկեղեցական Վիճակային ժողովէն պատրաստուած եռապատիկ ցանկին մէջէն։

Digitized by Google

Կրօնային Ատեան

Յօդ. 38. Կրօնային Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական Դատարանին վճռած այն խնդիրները՝ որք զուտ կրօնական հանգամանք ունին ։

Քաղաքային Ատեան

Յօդ. 39. Քաղաքային Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական Դատարանին վճռած այն խնդիրներն, որք զուտ քաղաքական հանգամանք ունին ։

Խառն Ատեան

Յօդ. 40. Խառն Ատենին պաշտօնն է՝ վերաքննել Կեդրոնական Դատարանին վճռած այն խնդիրներն, որք կրօնական և քաղաքական հանգամանք միանգամայն ունին ։

ԳԼՈՒԽ Գ.

ԿՐՕՆԱՑԻՆ ԱՏԵՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԱՍՆԱՒՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 41. Կրօնային Ատենին պաշտօնն է նաև՝ Ազգին կրօնական գործոց

Digitized by Google

ընդհանուր տեսչութիւնն ։ Իւր պարտաւորութիւնքն են՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անեղծ պահել տալ. կրօնական զգացումն ազգին մէջ զարգացընելու ջանալ. Եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեան հսկել. և ազգին մէջ ծագած կրօնական խնդիրներն ու վէճերը քննել և լուծել ։

Սոյն Ատեանը կը քննէ և կը դատէ եկեղեցականաց պաշտօնին և պարտաւորութեանց վերաբերեալ խնդիրները ։

Նմանապէս ձեռնադրութեան համար ներկայացեալ ընծայացուաց արժանիքը կը քննէ, կ'ստուգէ և նոցա ընդունելութիւնը կ'որոշէ ։ Նոյնպէս կը հսկէ Դպրաց դասուն վրայ, և զարժանաւորս 'ի պաշտօն դպրութեան կը կոչէ ։

Յօդ. 42. Կրօնային Ատեանը՝ կրօնական գործոց համար՝ կը գումարի, ընդնախագահութեամբ Պատրիարքին և դերնախագահութեամբ Կրօնական Խորհըրդականին ։

Յօդ. 43. Քահանայի ձեռնադրու-

Digitized by Google

թէև չկրնար կատարուիլ Կ. Պոլսոյ մէջ, մինչև որ Կրօնական Խորհրդականին առաջարկութեան վրայ Պատրիարքին կողմէ արտօնեալ չըլլար. և այս արտօնութիւնը չկրնար տրուիլ, մինչև որ Թաղի մը Քահանայից դասն ու Թաղական Խորհուրդն ստորագրեալ տեղեկագրով չը խնդրեն, ընծայացուին վարուց ու բարուց համար չվկայեն, և նորա ապրուստին ապահովութիւնը չերաշխաւորեն ։

Սոյն պայմաններուն համեմատ կը կատարի նաև գաւառաց մէջ քահանայից ձեռնադրութիւնը, գաւառին Առաջնորդ Եպիսկոպոսին ձեռօք ։ Իսկ Առաջնորդն՝ եթէ Եպիսկոպոս չէ՝ ձեռնադրութիւնը սահմանակից վիճակաւոր Եպիսկոպոսին կը յանձնէ ։

Նմանապէս կուսակրօն եկեղեցականի ձեռնադրութիւն՝ թէ՛ ի Կ. Պոլիս և թէ՛ ի գաւառս՝ չկրնար կատարիլ, մինչև որ Եպիսկոպոսի մը կամ վանական Միաբանութեան մը կողմանէ ընծայացուին բարուց և վարուց համար գրաւոր վկայութիւն չտրուի, ուսման մասին պաշտօնական քննութենէ չանցնի և Պատրիարքէն արտօնեալ չըլլի ։

իսկ առաջնորդի մը եպիսկոպոսանալուն համար Գաւառական ժողովոյ ընտրելագիրը Կրօնային Ատենին մէջ քննուելէ յետոյ, վկայականը Պատրիարքէն կը կնքուի, ըստ առաջարկութեան Կրօնական Խորհրդականին ։

Յօդ. 44. Երբ Կրօնային Ատեանը խնդիր մ'ունի ձեռնհասութենէն վեր դատէ, կամ երբ Պատրիարքն և կամ Կրօնական Խորհրդականը չհաւանին Կրօնային Ատենին որոշման, Պատրիարքին հրաւիրանաց վրայ Եկեղեցական Վիճակային Ժողով կը գումարի և խնդիրը նորա որոշման կ'ենթարկի ։

Եկեղեցական Վիճակային Ժողով

Յօդ. 45. Եկեղեցական Վիճակային Ժողովը կը բաղկանայ, Կ. Պոլսոյ մէջ գտնուող Եպիսկոպոսներէ և Առաջնորդ կամ Վանահայր Վարդապետներէ, Երուսաղէմայ և Կ. Պոլսոյ Պատրիարքական փոխանորդներէն, և Կ. Պոլսոյ Եկեղեցեաց քարոզիչներէն և աւագ քահանայներէն, ի բաց առեալ վարչութեան կողմէ ընդ դատաստանաւ ճանչուած եկեղեցականներն ։

Digitized by Google

Digitized by Google